ԱՌԱՔ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Հ. ՏԱՐԻ 2001
ԹԻՒ 6-7, ՅՈՒՆԻՍ – ՅՈՒԼԻՍ
June – July, № 6-7, 2001

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ PRESBYTERIAN ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(ՅՈՒՆԻՍ 8-16, LOUISVILLE, KENTUCKY)

Միացեալ Նահանգների Presbyterian (*Երիցական*) *Եկեղեցւոյ տարեկան համագումարներին ընդհանրապէս յատուկ ընտրութեամբ եւ ընդհանուրի վաւերացումով հրաւիրւում են նաեւ մի քանի այլ եկեղեցիների ներկայացուցիչներ՝ որպէս* ecumenical advisor *մասնակցելու համագումարի աշխատանքներին։ Այս տարուայ համագումարին մասնակցելու հրաւէր էր յղուած Հայոց Առաքելական*

Եկեղեցւոյ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, եւ Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ ես կատարեցի այդ առաքելութիւնը։ Ի հարկէ, ժամանակին համագումարի մասին զեկոյցս ներկայացրել եմ Կաթողիկոսութեան. իսկ այժմ պարտք եմ համարում, դարձեալ Վեհափառ Հայրապետի յանձնարարութեամբ, հակիրճ զեկոյցով ներկայանալ հանրութեան եւ առիթը օգտագործելով, որոշ բացատրութիւններ տալ նաեւ Միացեալ Նահանգներում ամենից մեծ ու ազդեցիկ եկեղեցիներից մէկի՝ Presbyterian Եկեղեցւոյ մասին։

Աւելացնեմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնից բացի, հրաւիրուած էին Ճապոնիայի Քորէական, Քոսթա Ռիքայի Աւետարանական, Միացեալ Նահանգների Միացեալ (United Church of Christ) Լուիվիլի St. Matthews Եպիսկոպոսական, Սպանիայի Աւետարանական եւ Հոլանդիայի Բողոքական եկեղեցիները, Բանգլադէշի եկեղեցին եւ Կաթողիկէ Եպիսկոպոսաց համագումարի ներկայացուցիչը. իսկ Միացեալ Նահանգներից դուրս աշխատող Երիցական անկախ եկեղեցիներից՝ Կենտրոնական Աֆրիկայի, Քանադայի, Մալեզիայի, Բոլիւիայի եւ Սուդանի եկեղեցիները։

Համագումարին մասնակցում էին շուրջ 700 քուէի իրաւունքով պատգամաւորներ, նաեւ՝ 170 Youth Advisory, 25 Theological Student Advisory, 8 Missionary Advisory, 15 Ecumenical Advisory պատգամաւորներ եւ 300 դիտորդներ, մամլոյ ներկայացուցիչներ եւ այլ մասնակիցներ, ընդհանուր թուով, հաւանաբար շուրջ 1500 հոգի։ Խորհրդատու պատգամաւորները լիագումար նիստերին մասնակցում էին խորհրդակցական ձայնով, իսկ յանձնախմբերի աշխատանքային նիստերին՝ քուէի իրաւունքով։

Նախքան համագումարին անդրադառնալը, անհրաժեշտ եմ համարում Միացեալ Նահանգների Երիցական Եկեղեցւոյ մասին որոշ տեղեկութիւններ փոխանցել։ Երիցական առաջին եկեղեցին հիմնուել է 1683-ին Մերիլանդում. Երիցականների առաջին գաղութը կազմուել էր դրանից հազիւ յիսուն տարի առաջ։ Երիցական Եկեղեցւոյ առաջին համագումարը տեղի է ունեցել 1789-ին Ֆիլադելֆիայում։ Ուրեմն այս տարուայ համագումարը 213-րդն էր համարւում։ Միացեալ Նահանգների Երիցական Եկեղեցին իր երկու դարից մի քիչ աւելի պատմութեան մէջ վերիվարումներ ու աստուածաբանական եւ սկզբունքային հարցեր շատ է ունեցել։ Այս հարցերից ոմանք վերջապէս լուծումի են յանգել, իսկ ուրիշները երկարել, խոչընդոտների հանդիպել եւ եկեղեցու մէջ ճեղքուածք են առաջացրել կամ նոյնիսկ մեծ թուով presbytery-ների մայր եկեղեցուց անջատման պատճառ են դարձել։ Այս բաժանումների ու վերամիացումների փուլը անցած Երիցական Եկեղեցու այսօրուայ պատկերը եւ անուանումը արդիւնք է 1983-ին կայացած հանգրուանային վերակազմակերպման։ 1988-ից ի վեր, Եկեղեցու 200-ամեակի տօնակատարութիւնների հետ առընթեր, կենտրոնական գրասենեակ է հաստատուել Լուիվիլում, որ աշխատում է մինչեւ այսօր։

Միացեալ Նահանգների Երիցական Եկեղեցին մաս է կազմում Բողոքական Եկեղեցիների բարեկարգեալ փաղանգին։ Նրա աստուածաբանական աւանդութիւնը Ճոն Քալվինից է սերում, իսկ Սուրբ Գրքի ճշմարտութեան մեկնաբանումը այս եկեղեցու համար խտացած է Ուեսթմինսթրի ուսուցմունքի (Westminster Catechism, 1647) եւ 1967-ին վաւերացուած, ժամանակակից անգլերէնով շարադրուած եւ այժմէական հարցեր շօշափող Book of Confession-ի մէջ։ Միացեալ Նահանգների Երիցական Եկեղեցին դաւանաբանական ու սկզբունքային հարցերի շուրջ շարունակական յարաբերութիւնների մէջ է այլ բարեկարգեալ եկեղեցիների հետ. իսկ Միջ-Եկեղեցական Շարժման եւ այդու Եկեղեցիների Հա-

մաշխարհային Խորհրդի մէջ բաւական կարեւոր դեր ունի ստանձնած։

Հիմա անցնելով համագումարին, պիտի ասեմ, որ մեծ կարեւորութեամբ ամէն առիթով նշուեց ներկայութիւնը եւ մասնակցութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան։ Նոյնիսկ առիթ տրուեց ինձ Invocation-ը կատարելու առաւօտեան պաշտամունքներից ամենից կարեւորի, որի պատգամաբերը Եկեղեցւոյ Stated Clerk՝ Rev. Dr. Clifton Kirkpatrick-ն էր եւ որին ներկայ էին շուրջ 2000 հաւատացեալներ։ Ինձ առիթ տրուեց նաեւ համագումարի նիստերից մէկի փակման աղօթքը կատարելու, որի մէջ կարողացայ ներառնել նաեւ Հայաստանում Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700 ամեակի առիթով որոշ հայկականութիւն։ Հետեւելով Արամ Ա. Վեհափառ Հայրապետի այն սովորութեան, որ օտար մեծ հանդիսութիւններում, անգլերէն լեզուով աղօթքի մատուցման ընթացքում հայերէն աղօթք է հնչեցնում, ես էլ նոյնը կատարեցի։

Համագումարի ընթացքում, փորձեցի որքան կարող եմ մասնակից լինել հարցերի քննարկմանը եւ իմ ներդրումը ունենալ մանաւանդ յանձնախմբային աշխատանքներում։ Շատ անգամ ինձ դիմում էին որպէս the Armenian voice։ Ցստակ է, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յղուած հրաւէրի դրդապատճառը կամ մղիչ ազդակը վերջերս կարեւորութիւն ստացած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տեղն ու դիրքն է աշխարհի քրիստոնեայ ընտանիքում, բայց մանաւանդ՝ Վեհափառ Հայրապետի գործունն եւ ազդեցիկ ներկայութիւնն է համաշխարհային Միջ-Եկեղեցական Շարժման ոլորտում եւ նրա ատենապետի հանգամանքը Համաշխարհային Եկեղեցիների Խորհրդում։ Ուրեմն, պէտք էր գոնէ որոշ չափով արդարացնէի եւ արժեցնէի ներկայացուցչութիւնս։

Համագումարի ընթացքում, նախ յանձնախմբային դրութեամբ եւ յետոյ լիագումար նիստերով, քննարկուեցին բազմազան հարցեր, որոնցից կարեւորներն էին՝ National and Social Issues, Ordination Standards, Church Polity, Ecumenical Relations, Unity of the Church, Theological Issues and Educational Institutions։ Ձեռնադրման հարցը բաւական փոթորկալից էր քանի որ հարցը միասեռականների անսակարկ œ անխտիր ձեռնադրութեան էր վերաբերում։ Միասեռականները այնքանով շահեցին, որ ձեռնադրման պայմանների միջից զեղջուեց այն բաժինը, ուր ասւում է, թէ թեկնածուն պիտի լինի կամ՝ ամուսնացած (չեշտելով կին եւ այր մարդ զուգակցութիւնը) եւ կամ, ամուրի լինելու պարագայում, պիտի վարի մաքուր եւ բարոյական կեանք։ այնուամենայնիւ, թեկնածուի ձեռնադրման վերջնական որոշումը թողնուեց presbytery-ներին։

Ընդհանուր մտահոգութիւն էր Երիցական Եկեղեցւոյ հետեւորդների թուի նուազումը։ Գոյութիւն ունէր այն կարծիքը, թէ դրա կարեւոր պատճառը որոշ սինոտների որդեգրած կարծր դիրքն է միասեռականների նկատմամբ։ Նոյնիսկ խօսւում էր Եկեղեցւոյ երկճիւղման մասին՝ եթէ միասեռականների նկատմամբ չեշտուած դրական կամ բացասական որոշումներ առնուեն։ Այնուամենայնիւ, համագումարը աւարտուեց հաշտ ու խաղաղ համագործակցութեան տրամադրութեամբ։

Ցունիս 16-ին մեծ շուքով եւ Երիցական պատգամաւորների ոգեւորութեան ու լաւատեսութեան մթնոլորտում կատարուեց համագումարի փակման արարողութիւնը։ Ծրագրուած ապագայի լայն գործունէութիւնը վաւերացուած էր եւ պիւտճէաւորուած։ Փայլուն էր ապագայի տեսլականը։